

Պարիս, 19 Փետր. 1931:

Մեր սրտագին ցաւակցութիւնները Արբաճօր մահուան առթիւ. կը մաղթենք արժանաւոր յաջորդ մը

Զերդ միշտ

Յ. Կ. Բաւմանեան:

Պրագ, 28 Փետր. 1931:

Գերազանցաւ Արբաճօր մահուան առթիւ հաճեցէք ընդունել ցաւակցութիւններս:

Զարէի Զատէեան:

Այցեւորմաներով իրենց ցաւակցութիւնը յայտնած էին ի մէջ այլոց՝

Le Nonce Apostolique. — p. c. Վիեննայի Առաքելական Նուիրակը Enrico Sibilla.

Karl Vaugoin (Զինուորական նախարար). — p. c.

Matthias Eldersch (Նախագահ Ազգ. խորհրդարանի). — p. c.

Bernhard Ellend (Սորհրդարանի անդամ). — p. c.

Dr. Max Frhr. v. Hussarek — bittet den ergebenen Ausdruck seines wärmsten und innigsten Beileids aus Anlaß des Ablebens des von ihm hochverehrten Erzbischofs Dr. P. G. von Govrik entgegenzunehmen. Leider bin ich am Dienstag, den 27. I. M., infolge des Besuches des Grafen Bethlen verhindert, den Trauerfeierlichkeiten beizuwohnen. R. i. P.

Prof. Dr. F. Kraelitz — bittet Euer Hochwürden, der Mechitharisten-Kongregation den Ausdruck seines innigsten und aufrichtigsten Beileids anlässlich des Hinscheidens ihres Generalabtes Erzbischofs Dr. v. Govrik gütigst übermitteln zu wollen.

Dr. Robert Neustadt (Բաղաքային առողջապահական վարչութեան անդամ) — erlaubt sich, der verehrten Mechitharistenkongregation sein herzlichstes Beileid auszusprechen.

Budapest, 1. Februar 1931.

Genehmigen Sie aus Anlaß des Hinscheidens Ihres Generalabtes, des Herrn Hochwürdigsten Dr. P. Gregor Govrik; den Ausdruck meines tiefgefühlten Beileids.

Papp János (Ներքրկան Սորհրդական):

August Kirsch (Սմբաւիր) Wien, erlaubt sich, der hochwürdigen Kongregation seiner aufrichtigen Teilnahme zu versichern.

Nos plus sincères condoléances.

La Société des Bollandistes (Bruxelles).

Univ.-Prof. Dr. C. Biehl (Wien) — bittet, den Ausdruck seiner wärmsten Teilnahme zum Ableben Ihres hochverehrten Generalabtes entgegenzunehmen.



ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Թի 1, 2

ՅՈՒՆՈՒԱՐ—ՓԵՏՐՈՒԱՐ

ԽԵ. ՏԱՐԻ 1931

ԵՂԻՉԷ ՂԱՐԳԱՊԵՏ

ԵՒ ԻՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ՏՆՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԲԵՆԵԿԵՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՆ

1. ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

Կան ճշմարտութիւններ, զորոնք դժուար է խոստովանիլ. եւ կան խոստովանութիւններ, որոնց դժուար է հաւատալ: Առաջնոյն պատճառը յաճախ՝ ակնածութիւնն է, եւ երկրորդին հիմք կանխակալ կարծիքը:

Տարւոյս (1931) Յունուար 12ին ի Պարիս Նուարեան Մատենադարանի մէջ բանաստեղծութիւն մ'ըրի Եղիշէի մասին: Նպատակս չէր դրուատիքն հիւսել հայ պատմագիրին, այլ ներկայացնել համառօտի իմ քննութիւններուս եզրակացութիւնը՝ անոր անձին եւ ժամանակին մասին: Հաղորդելու չատ բան ունէի, անհաճոյ ճշմարտութիւններ, բայց նկատելով, որ ներկայ հասարակութենէն շատերը չէին վարժած լսել ճշմարտութիւններ բանասիրական աշխարհէն, համարեցայ փափկանկատութեան հակառակ, պարզել իմ համոզումներս հրատարակելու:

Եղիշէ Հայոց պատմութեան փառապանծ դրուագի մը երկրին էր, հայ մատենագրութեան հռչակուած գէմքը, հայ լեզուի հոյակապ ուսուցիչը եւ վերջապէս Ազգէն բոլոր ժամանակ սիրուած եւ սքանչացուած հեղինակն Ե. դարու:

Այսպիսի համոզման դէմ յայտնել նորալուր ճշմարտութիւններ, Ե. դարու մատենագիրն է. դարու խմբագրիչ մը ներկայացնել, Վարդանանց պատերազմի (451) պատմագիրքը «Հայոց պատերազմի» (572) պատմութիւն հռչակել հաւատար էր պատճառել հիասթափութիւն ունկնդիրներուս եւ արթնցնել զայրոյթ նախապաշարունակութեամբ սրտերու մէջ: Այս պատճառաւ ալ թէեւ հարկ էի տեսած կանխաւ խնդրել

ունկնդիրներէս ներողամտութիւն, եթէ եզրակացութիւններս հնչուէին նորաձեւ, բայց եւ այնպէս համարած էի խոհեմագոյն առ ժամն ճշմարտութեան դուռն բանալ թերաբամ, լսելի ընել միայն կասկածներ Եղիշէի անձի եւ ժամանակի մասին, ընդհնմարել ալ ստուերներ Պատմութեան բովանդակութեան շուրջը, որպէս զի ընտելանան աչքերը լոյսին եւ ականջները նորալուր յայտնութիւններու:

Լսուեցայ հետաքրքրութեամբ: Բայց նկատեցի շուտով, որ ունկնդիրներէս ոմանք մնացին արդիւնքէն անբաւական, ուրիշներ հեռացան սրահէն յուսախար, եւ ինչպէս լսեցի յետոյ՝ նաեւ զայնթակղած: Լրագրութիւնը արձագանդեց տեղահեռութեան եւ զայրոյթի ձայներ. ունեցայ ընդդիմախօսներ հրատարակաւ եւ լրագրութեան մէջ: Աւանդութեան ջատագովները կ'արտայայտուէին յուզումնաւից: Ինչ որ ես եզրակացուցած էի տարիներ խորհելէ յետոյ, անոնք կը հերքէին գրչի մէկ հարուածով: Չեզան նաեւ զգօն, սպասելու այն ուսումնասիրութեան, որ խոստացուած էր հրատարակել «Հանդէս Ամսօրեայ»-ի մէջ, ուր մերձաւորները խնդրէր լայնագոյնս պարզուած պիտի տեսնէին իրենց առաջ եւ հեռաւորները պիտի թափանցէին յայտնուած մտքերու պատճառարանութեան: Բայց հրատարակագրութիւնը քննադատութիւն չէ եւ ոչ ալ յախուան բողոքները յարգանքի ցոյց դէպի մեր պաշտօնի նախնիները եւ անոնց մատենագրական ստեղծագործութիւնները:

Եղիշէ ստուեր կը ձգէր Ղազար Փարպեցու Պատմութեան վրայ. իր եւ Ղազարի անմիաբանութիւնը կը մթապնէր Ե. դարու երկրորդ եւ երրորդ քառորդի Հայոց (նաեւ Պարսից) պատմութիւնը. Եղիշէով սքանչելի Ղազարի հաւատարմութիւնը կ'ենթարկուէր կասկածի. Եղիշէ (ինչպէս երբեմն Մովսէս

Պորենացի) կը խանդարէր Ե. դարու հայ մատենագրութեան ներդրանակութիւնն եւ միասնակեանութիւնը, խարակ մըն էր ցցուած խաղաղ ծովու յատակէն, որ կը սպառնար բանասիրութեան նաւի անվթար ընթացքին: Հայ մատենագրութեան դէմ նիւթուած դատաւարութիւնն պիտի դատուի, եթէ փորձուի այդ խոչնդոտը մէջտեղէն ի բաց պարտել: Կամ «Նշխարի անէծքին մասնատանջութեան» պիտի հանդիպէի իբրեւ «դատող»:

Բայց եւ այնպէս կան մարդիկ, որոնք այսպէս կը դատեն:

Նշխարի կեանքի աւանդակը իւր բոլոր հակասութիւններով, անհեղեղութիւններով ընդունելի, հաւատարի է անոնց: Նշխարի պատմութեան բովանդակութիւնը՝ թո՛հ եւ բո՛հ մըն է, անձեւ անկերպարան, անմիասնական Ե. դարու քաղաքական համադրանքներուն, անհամաձայն ժամանակակից տո՛հմիկ եւ օտար աղբիւրներու, բայց եւ այնպէս «ականատեսի» ստուգապատում խոստովանութիւններ կը դատուին անոնք: Երկու անհամերաշխ է Ե. դարու բարբառին, խրատելի է ինչպէս արծաթը ոսկւոյ կոյտին մէջ, բայց կը սքանչացուի, նոյն իսկ քան գոսկի գեղեցիկ կը հուշակուի: Հիւսուածքը խայտարակ, մուրացածոյ տարրերով անկուած մըն է, սակայն եւ այնպէս է հիանալի, ոգեպարար:

Իժուար է վիճել մանաւանդ անոնց հետ, որոնք ամէն հետազոտութիւն այս հողի վրայ կը դատապարտեն իբրեւ «դերակիրթ ցուրտ քննադատութիւններ»¹ կամ իբրեւ «մի բուն միջուկն ամէն ինչ որ հին է կամ սովորական՝ վեր ի վայր չըջելու, ոչ եթէ... ազգային պատմութեան եւ մատենագրութեան այս կամ այն կէտը լուսարեւը, այլ խօլ բերմամբ որ եւ է նոր բան մի բնութեւն եւ այնու... անաչառ քննադատ երեւալու՝ խիստ — թէ եւ յաճախ անիրաւ — դատափետրութեամբ անձին կամ գործոյն զոր կը քննեն»²:

Ամէն քննադատութիւն արդար կամ անիրաւ, խիստ կամ տկար օգտակար է մատենագրութեան համար: Կայծր կը ծնի երկու կայծքարերու հարմամբ. եւ ամէն քննադատութիւն ողջունելի է, մանաւանդ երբ

կը գտնէ իւր դիմաց ընդհարման կէտ: Բայց քննադատութեան դէմ քննադատութիւն ի խնդիր լոյսին: Աւանդութիւնը պիտի ենթարկուի կասկածի եւ կասկածը պիտի բախի կասկածի. երկուքի մէջէն պիտի ժայթքէ լոյսը կամ ի նպատակ եւ կամ հակառակ աւանդութեան³: Այս պատճառաւ այժեմ կրնար արդարացնել այն երկիւղը զոր կը զգան ազգասէրներէն ոմանք քննադատութեան առջեւ, այսպէս տրամաբանելով. «Մեր հին մատենագրութեանն ու եւ է մի գործ քանդելով կամ արտաքսելով՝ յայտնի է թէ աղքատացուցած կը լինինք զայն. եւ այդ աղքատութիւնը մեր մարդկային բնական անձնասիրութեան դէմ է: Մենք դեռ չենք հասած այն գերբնական կատարելութեան, որով կարենանք ստանութեամբ արհամարհել մեր բոլոր սեպհականութիւնքը»⁴:

Բանասիրութեան մէջ քանդելն կառուցանել է եւ արտաքսելն ներմուծել. որովհետեւ աւերակին վրայ պիտի թաղաւորէ ճշմարտութիւնը, եւ մէկ գարէն արտաքսելով պիտի գտնէ միւսին մէջ իւր բարձր⁵: Պիտի աղքատանալ հայ թանգարանը, եթէ իւր որահներէն կեղծիք մը հեռացուի. կեղծիքն իւր մէջ անշնորհ է. զայն բարեբէլ ուզելն պիտի համարուի անավաստակ աշխատութիւն, որովհետեւ պիտի նշաւակուի օր մը սրտուս աչքէ: Եւ եթէ զուր է կասկածը, անտեղի քննադատութիւնը՝ կարող ենք հանդիստ սպասել. ճշմարտութիւնը իւր ձայնը լսելի պիտի ընէ վաղ կամ անագան. եւ այսօրուան աքսորականը վաղը պիտի դառնայ իբրեւ հերոս դափնեպսակ իւր հայրենիքը:

³ «Եթէ պատմական գիտութեան սկզբնաւորութիւնը տարակուսելով, ստուգելով, հետազոտելով կ'ըլլայ, քննադատութիւնը, որուն գործն է գիտորէն տարակուսել, ստուգել եւ հետազոտել, հարկ է որ չնեղի իւր նպատակէն եւ այդ նպատակին տանող շաղկէն, սրպէս զի կարող ըլլայ իւր ձեռք բերած արդիւնքը համադրել»: Ծ. Գուլամի (համ. Կիւլիսի-րեան) Նշխարի, էջ 12:

⁴ Հ. Վ. Հացունի՝ Սորհրդածութիւնք, էջ 227:
⁵ Ուղիղ կը դատէր այս տեսակետով Բարդէն Ծ. Վ. Կիւլիսի-րեան, երբ կը գրէր (Նշխարի, էջ 10). «Քննադատական ոգին չնուազեցնէր մեր մատենագրութեան արժէքը: Լա՛ւ է իրական արժէքը գիտնալ մեր ունեցած մատենագիրներուն, քան թէ նախապաշարուի անոնց վրայ»:

Նշխարի անձին նկատմամբ տարակոյտնը յայտնի է վարդանանց Պատմութեան շարագրական տարրերը երեւան բերել, նշանակել՝ չըտորնացնել գրուածին յարկը: Ոսկի Մատենա՛ր նորէն եւ միշտ ոսկի է. հարկուոր չէ՞ սակայն, գիտնալ թէ ի՞նչ պիտի հանքերէ հանուած է այդ ոսկին»:

¹ Հայագատում, Ա. § 20:
² Հ. Վ. Հացունի՝ Սորհրդածութիւնք, էջ 6:

Սօսքը նախնեաց ստեղծագործութիւններու մասին է, զորոնք հասցուցած է մեզի աւանդութիւնը: Ասոնց արժէքը պիտի գնահատէ բանասիրութիւնը. հարադատութիւնը պիտի փորձէ քննադատութիւնը: Ոչ արտաքինն ստանձին եւ ոչ ներքինն միայն միայնակ զբաւականն կարող են նկատուիլ աւանդութեան հարադատութեան, ուստի ո՛չ արտաքինն սկիսխտիղ երեւոյթները, ճարտարաբան արտայայտութիւնները, գեղարուեստական կառուցուածքը կ'ազդեն քննադատական կառուցուածքը կ'ազդեն քննադատին վրայ, ո՛չ դարձեալ ներքինն սրտապարար, ձգիչ, սիրական բովանդակութիւնը կարող է կաշտել անոր դատողութիւնը, եւ ո՛չ ալ հեղինակին աշխարհահամբաւ անունը կը զօրէ պատկառանք ներշնչել հետազոտողին վրայ: Բայց եթէ արտաքինն եւ ներքինը կ'ազդեն գերկրնդխտան, հաշտ եւ համերաշխ, համապատասխան անձին եւ ժամանակին, հոն կը փայլատակէ եւ հարադատութիւնն եւ վաւերականութիւնը, հոն կը փայլատակէ եւ արտաքսելն: Եւ մեր փարատին կասկած եւ տարակոյտ. եւ մեր յարգանքն եւ համակրութիւնը կ'ապահովուի թէ հեղինակին եւ թէ հեղինակութեանը: Ուր կը պակսի այս ներդրանակութիւնը, հոն ծնունդ կ'առնէ կեղծիքը:

Եւ եթէ կայ բան մը, որ ամէնէն աւելի կրնար հանդուրժել իւր էջերու մէջ մատենագրութեան պատմութիւնը, այդ կեղտնախորտն է: Բայց ամէն անհարազատ հարածիքն է: Բայց ամէն անհարազատ հարածիքն է իւր մօր՝ իւր ժամանակին. անոր ծոցին մէջ ունի ան իրաւունք սիրոյ եւ յարգանքի. զոր պիտի վայելէ աննախանձ:

Մասնաւորելով մեր խօսքը կրկին Նշխարի շուրջը գիտել կու տանք, որ երբ անոր անձը, ժամանակը եւ գրութեան բովանդակութիւնը կ'ենթարկենք քննութեան, երբ կը տեղափոխենք ժամանակը, այս՛, նոյն կը պատմութեան բովանդակութեան կու տանք նոր միտք, նոր ընթացք, նոր կերպարանք, այսու չի տարածուի մեր ուսումնականութիւնը կարմիր վարդանի եւ իւր նիւզակակից ընկերներու հերոսամարտին վրայ. Աւարայրի հերոսը կը փնայ բարձր իւր փառքին մէջ. եթէ Նշխարի մը ուզած է զանիկ վերաբերել, իրմէ շատ յառաջ Ղազար փարպեցի մը փութացած է պատմագրել անոր արիական գործերը աւելի անկեղծութեամբ, աւելի հարադատութեամբ, աւելի խանդով եւ սքանչացմամբ: Եւ Ղազարի անսեթեթ

բայց սրտոտ եւ վառ նկարագրութիւնը աւարկայական ճշմարտութեամբ աւելի սիրելի է եւ յարգի, քան Նշխարի կեղծ ոգեւորութիւնը եւ սին ճարտարաբանութիւնը:

Ուստի ազմուկը, զոր հայրենասէրները բարձրացուցին օրաթերթերու մէջ իմ ստեղծութիւններու դէմ առանց մօտէն ճանչնալու զանոնք շխանդարեցին զիս իմ հետազոտական ճանապարհիս վրայ:

Կը կրկնեմ. եթէ ունին անոնք պատմութիւն քննադատական մարդին մէջ, եթէ ունին աչք տեսնելու եւ ահանջ լսելու եւ կամք խոնարհելու ճշմարտութեան առջեւ, Նշխարի մատենա՛ր կ'ընձեռէ անոնց մէկէ աւելի կէտեր, որոնք բարձրաբարբառ կ'ազդակեն, թէ հոն ոչ վարդանանց պատմութիւնն է հարազատ եւ ոչ հեղինակն ստուգապատում, այլ ամբողջն է. դարու խմբագրութիւն մըն է, անձոյլ համագրութիւն մը անմիասնական տարրերու:

Ձեմ կրնար իբրեւ մանուկ մատաղօրեայ ի տես պաղպաղուն բոցին կարկանդակ ձեռք ընդգրկելու համար զայն, որ կարող է խանձել զիս. չեմ կրնար նոյնպէս ի լուր հրավառ խօսքերու, որոնք կը հնչեն Նշխարի կուրծքէն, ի՛նչալ անոր գիրկը, որ կարող է վտանգել սուղը դատողութիւնս: Քննադատելն բանաստեղծել չէ. եթէ բանաստեղծը զգաճումի եւ երեւակայութեան թեւերով կը ձգտի կը վերանայ դէպի եթերներ, օդը ծեծելու եւ ծծելու, քննադատը կը փնտոէ իր ոտքերուն տակ հաստատուն հող եւ կը յառաջանայ ամուր քայլերով դէպի ճշմարտութիւն:

2. ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ

Ամենաթոյլ մատենա՛ր, որ կայ հայ մատենագրութեան մէջ, որ չի կրնար դիմանալ լուրջ քննադատութեան, այդ Նշխարի «Վասն վարդանայ եւ Հայոց պատերազմի» գրութիւնն է իւր ներկայ խմբագրութեան մէջ: Եւ եթէ սակայն մինչեւ այսօր չգտաւ այդ մատենա՛ր իւր վերջնական ուսումնասիրութիւնը, պատճառը կանխակալ կարծիքն էր, որուն յատու մնացին ամէն անոնք, որոնք փորձեցին մերձեցնալ այս աշխատութեան: Վերնագիրը թովեց անոնց միտքը, բովանդակութեան արտաքին երեւոյթը կաշկանդեց անոնց ուշադրութիւնը, հերոսն եւ հերոսամարտին միջավայրը ազդեցին անոնց զգա-

ցուններուն վրայ. եւ այսպէս բառերը կոր- սընցուցին իրենց իմաստը, պատկերները՝ նշանակութիւնը եւ դէպքերն՝ իրականու- թիւնը, անոնք չչափուեցան, չկշռուեցան, չտարբարուծուեցան արեւի լուսին տակ, ա- ոողջ դատողութեամբ:

Որպէս զի նոյն սխալ ճանապարհով շըն- թանայ այս ուսումնասիրութիւնն ալ, պիտի կանխեմ պեղել կանխակալ կարծեաց հիմք՝ աւանդութիւնը, ցոյց տալու համար թէ ս'ը- քան անհաստատ է այն, հետեւարար նաեւ խախուտ անոր վրայ բարձրացած չէնքը: Բայց փրատակներու տակէն պիտի դան երեւան բեկորներ, որոնց վրայ՝ հակառակ դարերու գործած ապականիչ ազդեցութեան պիտի նշմարուին հին աւանդութեան հետ- քերը, որոնց կարելի է դարձնել ուշագրու- թիւն:

Կարեւոր է աւանդութեանց կից ասնել նկատի նաեւ անոնց ըմբռնումը նոր եւ նո- րագոյն դարերուն մէջ. եւ տալ տորնթեր շարքը այն կասկածներուն, որոնք ծայր առած են այդ ըմբռնումներու դէմ:

Նախորդ շրջանի քննութիւններու վրայ նետուած այս ընդհանուր ակնարկին պիտի յաջորդէ Եղիշէի մատենին վերլուծումը նոր տեսութեամբ: Պիտի դանազանեմ հոն կրկին տարբեր, հին եւ նոր խմբազրութիւն. առաջինը պիտի ներկայանայ իբրեւ «Պատ- մութիւն Հայոց պատերազմին», այս ինքն նկարագրութիւնը 532—580 տարիներու դի- պլոմատներու եւ Դոնոյ 572ի ապստամբու- թեան իբրեւ կրօնական պատերազմ. իսկ եր- կրորդ խմբազրութիւնը պիտի ձաղուի իբրեւ խարդախութիւն առաջնոյն, այս ինքն 572ի «Հայոց պատերազմի» պատմութիւնը վե- րածուած 451ի Վարդանանց պատերազմի պատմութեան հետեւողութեամբ Ղազար Փարպեցւոյ Բ. Դրուագին: Վերլուծումիս արդիւնքը պիտի ըլլայ յայտնութիւնը Եղի- շէի գաղտնեաց: Եղիշէ Բ. ի Վարդանը պիտի տուէ հոն իւր դպինին, բայց դպինեպսակ պիտի պարծի իւր փառքին մէջ Եղիշէ Ա. ի Վարդանը:

Սուինք նմանութեամբ. Պատմարան մը գրի կ'առնէ ականատեսի թարմ ապաւորու- թեան տակ 1914—1918 տարիներու գերման- Ֆրանսական պատերազմի պատմութիւնը: Յիսնեակ եւ աւելի տարիներ յետոյ ուրիշ մը կը փորձէ գայն վերածել 70ական թուա-

կանի դերման—Ֆրանսական պատերազմի պատմութեան՝ հիմնուած ժամանակակից աղբիւրի մը վրայ. դէպքերն կը պահուին ան- վտփոխ, բայց կը շրջուին դերակատարներու անունները, եւ գրչի արագ շարժումով մանր յապաւումներ եւ յաւելուածներ ներմուծուե- լով կը հանուի հրատարակ կեղծանուն պատ- մագրութիւն մը «ականատեսի» նկարագրու- թեամբ: Անշուշտ միամիտ ընթերցողը պիտի գտնէ հոն 70ական շրջանի դերման հերոսներու պատմութիւնը եւ պիտի սքան- չանայ. բայց յատակադիծը 1914—1918 տա- րիներու պարագաները կը ներկայացնէ, աչ- խարհասայեացքը՝ քսաներորդ դարու դա- տողութիւնը:

«Եղիշէ վարդապետի» անձն եւ ժամա- նակը ուրոյն բաժնի մէջ պիտի առնուին քննութեան, ուր ցոյց պիտի տանք թէ եղած է ստուգիւ է. դարու առաջին քստորդին թարոր լեռան վրայ եւ Սինայի բարձունքը համանուն հայ վարդապետ մը՝ հետամուտ միանձնական կեանքի: Այս տեղ պիտի առ- նուին նկատի յանուն Եղիշէի գրութիւնները, մեկնողական եւ ճառական, որոնք հասած են մեզի հնութեանէն:

Շատ պիտի երկարի ուսումնասիրու- թիւնս. եւ վախնամ թէ ժամանակի տեւո- դութիւնը պիտի փորձէ ընթերցողներուս համբերութիւնը: Երկվեցեակ դարերու ըմ- քունումներու դէմ է պատերազմը, հարկ է սպասել շատ ուղղամթերք:

3. ԵՂԻՇԷ ԵՒ ԱՌԱՋԻՆԻՓԻՆԵԼ ԻՐ ՄԱՍԻՆ

Վարդան Մամիկոնեանի, Հայոց սպա- րապետի ընդվզումը Պարսից դէմ հայ Եկե- ղեցւոյ ազատագրութեան համար, զորձեց անմոռաց տպաւորութիւն հայ ժողովրդեան վրայ, որ պատուեց իւր հերոսը «Կարմիր Վարդան» անուանակոչութեամբ: Վարդանի անձնաւորութիւնը վերածուեցաւ այնուհե- տեւ հայ մատենագրութեան մէջ զազափարի մարմնացումի: Պատմագիրներն անմահա- ցուցին հայ հերոսը. իսկ Հայոց Եկեղեցին դարձուց գայն յարգանքի առարկայ իւր խո- րաններու վրայ:

Հերոսամարտին պատմութիւնը, որ կ'ապրէր ժամանակակիցներու յիշողութեան մէջ, դարուն վերջերը գրի առնուեցաւ. Ղա- զար Փարպեցին էր, Մամիկոնեան տան մտերիին եւ բարեկամը, որ տուաւ մեզի

առաջին անգամ դէպքերու պատճառախնդիր նկարագրութիւնը ականատեսներու բերնէ՝ սքանչելի կարգաբանութեամբ եւ տաք սըր- տով: Նոյնը յետոյ Եղիշէի անուան տակ ներ- կայացուեցաւ իբրեւ մարտիրոսագրութիւն հայ ժողովրդեան: Եկող ժամանակները այս ներշնչման տակ հիւսեցին Հերոսին գովքը շարականներով, գանձերով եւ տաղերով:

Յարգանքի այս սաստիկութիւնն եւ ջեր- մութիւնը բարձրագոյն աստիճանի վրայ երեւան կու գան Եղիշէի Պատմութեան մէջ, որ կրակոտ նկարագրութեամբ եւ անհուն ոգեւորութեամբ կը կախարդէ ընթերցող- ներուն ուշն ու գուրուշը: Եղիշէ Պատմու- թիւնը նկատուեցաւ այնուհետեւ «Վարդա- նագիրք» եւ կարգացուեցաւ առանին եւ հրա- պարակաւ. իսկ Ղ. Փարպեցւոյ Դրուագը մատնուեցաւ մոռացութեան:

Հնութիւնը կարգաց միայն Եղիշէի մա- տեանը եւ հիացաւ հեղինակին ճարտարու- թեան վրայ. բայց չհետաքրքրուեցաւ անոր անձովն եւ կենսագրութեամբը: Եղիշէի կեանքի մասին առաջին ձայները կը լսուին Ժ. դարէն. իսկ յաջորդ ժամանակները կը պատմեն արդէն շատ բան: Բայց հեռաւո- րութեան մէջ ձայներու խուլ արձագանքն միայն կը լսուի. եւ դժուար է դանազանել հնչման նրբութիւնը: Սակայն եւ այնպէս հետաքրքրական է միշտ նշանագրել ստա- ցուած արդիւնքն ալ ճշդութեամբ, համո- ղուելու համար թէ ինչպէս ժամանակի մո- տաւորութիւնն եւ հեռաւորութիւնը կը ստեղծեն ձայներու ելեւէջներ, եղանակաւո- րումներ:

Եղիշէ իւր անձին եւ ժամանակին մա- սին: — Եղիշէի մատեանը խորագիր կը կրէ. «Եղիշէ վարդապետի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Դաւթի երիցու Մա- միկոնի հայցեալ»¹: Այս տեղ հեղինակ կը ներկայանայ Եղիշէ, որ վարդապետ է, ուստի պատկանեալ մը եկեղեցական դասի: Միա- բան է այս տիտղոսին գրութեան բովանդա- կութիւնը, որ գրուած է կրօնական ներ- շնչմամբ, աստուածարանական ուսումներու հմտութեամբ: Ուրիշ տեղ իր գրուածքին մէջ չունի հեղինակը ակնարկութիւն իր անուան եւ աստիճանի մասին: Յորդորուած է ձեռ- նարկել իր աշխատութեան Մամիկոնեան

¹ Սրբոյ հօրն փերց Եղիշէի վարդապետի մա- տենագրութիւնք, Վեներիկ 1859, էջ 5:

Դաւթի երիցու հայցմամբ: Ընծայականին մէջ անուանուած է ինդորդը «ով քաջ» պա- տուոյ յորջորջմամբ:

Հրամայուած է իրեն «ճառագրել» «Հայոց պատերազմի» մասին, համաձայն Ընծայականին. բայց չկայ որ եւ իցէ ակնար- կութիւն «վասն Վարդանայ» եւ անոր արխա- կան գործերու վրայ խօսելու: Հեղինակը յանձն առած է հրամանը «ոչ ըստ կամաց» (էջ 6) եւ կը ձեռնարկէ «ճառագրել ակա- մայ» (էջ 69):

Իր յանձնառութիւնը չէ պատմագրել, այլ միայն «ճառագրել զբազում հարուածս», որոնք «Հայոց պատերազմի» հետեւութեամբ հասած են այգին, եւ որոնց ինքն ալ եղած է ականատես. «արտօսարից ողբովք ճա- ռագրեմք զբազում հարուածս, յորում պա- տահեցաք եւ մեք իսկ ականատեսք լինե- լով» (6): Այլուր խօսելով Յազկերտ Բ. ի քրիստոնէութեան դէմ յարուցած հալա- ծանքներու մասին, կը պատմէ թէ ինչպէս անոնց առաջին փորձերն զործագրուեցան Պարսից բանակին մէջ զանուոյ քրիստոնէայ գինուրներու վրայ, սկսեալ «Ի Դ. ամէն մինչեւ Ի ԺԱ. ամն իւրոյ տէրութեան», ուստի 441—447 տարիներուն եւ կ'աւելցնէ.

«Ոչ ի կարծ ընդօստուցեալ, եւ ոչ ի լուր զարթուցեալ, այլ ես ինքնին անձամբ անդէն ի տեղուցն պատահեցի եւ տեսի եւ լուայ դձայն բարբառոյ յանդգնարար խօսելով. իբրեւ զհողմ սաստիկ, զի բախիցէ զծով մեծ, այնպէս շարժէր եւ տատանէր (Յազկերտ Բ.) զամենայն բազմութիւն զօրաց իւրոց» (էջ 14): Այս իմաստով կը գրէ վարձեալ. «Թէպէտ եւ ոչ իցեմք բաւական ասել զամե- նայն շարին, որ անցք անցին անդէն ի կա- բաւանին ընդ գունդն Հայոց, սակայն եւ ոչ լուի կամ իմք ծածկելով զվիշտս նեղութեանն. այլ սասացուք փոքր ի շատէ, զի ձայնա- կիցք լեցուք այնոցիկ, որք դառնապէս զմեզ ողբային. զի եւ դու իբրեւ լուիցես, ոչ սա- կաւ արտասուես հեղուցուս ի վերայ ազգին թշուառութեան» (էջ 41):

Համեմատէ նաեւ՝ «Եւ բազում այլ եւս յանարժան հարուածս շարշարէին գոր եւ ոչ ընդ Գրով իսկ արժամի համարեցաք արկա- նել» (էջ 18):

Այս տեղիքները ցոյց կու տան թէ Եղիշէ ապրած է Յազկերտ Բ. ի օրով (438—458), եղած է «ականատես» այս շրջանի դէպքե-

կան աղբիւրները՝ ընդ մէջ Մ. Խորենացոյ եւ Ղ. Փարպեցոյ⁷ կը դասաւորէ «Եղիշէ վարդապետ որ վասն Վարդանանց եւ սուրբ քահանայիցն չարչարանաց եւ կատարման» (էջ 7)։ Եւ այլուր յիշելով Վարդանի ապստամբութիւնը կը կցէ. «Որպէս ուսուցանէ Պատմութիւնն Եղիշէի վարդապետի» (էջ 78)։

Դաւիթ կրօնաւոր եւ Եղիշէի Պատմութեան ծանօթ հնագոյն օրինակն է էջմիածնի Չեռադրատան Թ. 1890, գրչութեամբ Դաւիթ կրօնաւորի, յամէ 1172: Յիշատակարանին մէջ կը գրէ գրիչը հետեւեալ գրուատական տողերը պատմագրի մասին, որոնք ուշագրաւ են. «Գրեցաւ գիրքս այս Եղիշէի պատմագրի եւ ընտիր վարդապետի, որ եւ տեղեակ եւ հմուտ էր ամենայն պատերազմաց Վարդանանց, եւ նեղութեանց որ անցին ընդ աշխարհս Հայոց. որ եւ այլ գիրս ստացեալ կանոնականս զգուշաւորս սրբոյ եկեղեցոց. եւ առաւելայ ի վարս արդարութեան՝ հաճոյ լինէր Աստուծոյ եւ մարդկան. եւ յետ այսր, վարս կրանաւորութեան յանձն առնոյր, եւ զիրստամբերութիւն ճշմութեան, պահաւք եւ տաճարութեան ճշմութեանս. եւ որպէս յալեաց ծովու ի նաւահանգիստ վիճակացեալ յանապատ, ի բաց լքեալ գերկրաւորս՝ զհետ երթայր գերկնաւորին. եւ զամենայն առաքելութիւն յանձին կատարելով, զամայութիւն սիրելով. եւ խոտարուտ կենաւք անցուցանելով զառաւրեա կենցաղս, սուրբս այս Եղիշէ իբրեւ զանմարմինս ի մարմնի կեցեալ. եւ զգիւցն մարտս վանեալ. եւ յանապատ ուրեմն յայրի վախճանեալ, բարի խոստովանութեամբ ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր. ամէն»։

Դաւիթ կրօնաւոր թէեւ գիտէ Եղիշէի միանձնութեան անձնատուր կեանքը, բայց չէ լսած տակաւին անոր ճշմարանի տեղը Մոկաց լեռերու վրայ, ինչպէս քիչ յետոյ Յայսմաւուրքի մէջ կը սկսի պատմուիլ։

Յայսմաւուրք եւ Եղիշէ: — Վիեննայի Միթիթարեան Մատենադարանի Թ. 7 Յայսմաւուրքն, որ կը ներկայացնէ Տէր Իսրայէլի խմբագրութիւնը, այսպէս կը պատմէ Եղիշէի վարքը (Թղ. 401ա)։

⁷ Այսպէս նաեւ Սամուէլ Անեցի (էջ 3). «Եւ ապա Մովսէս Խորենացի հաւաստապատումն եւ զինի Եղիշէ եւ Ղազարիկ» (հմմտ. եւ էջ 71)։

«Մեհեկի ԻԱ. եւ Փետրուարի ԻԷ. յիշատակ է Եղիշէ վարդապետի եւ ճգնաւորի»։

«Երանելին Եղիշէ էր զինուորեալ Վարդանայ Հայոց զօրավարին եւ էր զպրապետ. եւ տեսող լեալ ամենայն անցից որ անցին ընդ զօրս Հայոց ի Յագիկերտէ Պարսից արքայէ: Եւ յետ նահատակութեան զօրացն Հայոց թողեալ զզինուորութիւնն՝ կրօնաւորեցաւ եւ բնակէր խոտակրօն ճգնութեամբ յանապատի՝ պահոց եւ աղօթից պարապեալ, խոտարուտ եւ գետնախշտի լեալ յաշխարհին Մոկաց եւ ի Ծովեզրն: Եւ անդ գրեաց զՊատմութիւն սրբոց Վարդանանցն. եւ զգիրս կանոնականս եւ զՄեկնութիւն Արարածոցն եւ զԳիրս խաչելութեանն Քրիստոսի եւ այլ գիրս օգտակարս: Եւ տուաւ նմա շնորհք բժշկութեան: Եւ կացեալ ի բարիօք ճգնութեանն յոլով ժամանակս. եւ վախճանեցաւ աստուածահաճոյ վարուք յամսեանն Մեհեկի ԻԱ. եւ Փետրուարի ԻԷ: Եւ ժողովեալ բազմութիւնք քրիստոնէից եւ թաղեցին զնա պատուով: Եւ իշխանն Մոկաց զնաց ի գերեզման նորա ուխտի աղաղաւ՝ զաղտ հատեալ զգլուխ սուրբ վարդապետին եւ առեալ ի գիշերի վախստական անկաւ յաշխարհն իւր: Եւ մեծապէս պատուեցաւ առաջին բնակութիւն սրբոյն. եւ ամենայն որ հաւատով երթան ի գերեզման նորա, կատարին խնդրուածք նոցա եւ բժշկին յիւրաքանչիւր ցաւոց զօրութեամբն Քրիստոսի Աստուծոյ մերոյ»։

Յայսմաւուրքի յետագայ խմբագրութեանց մէջ երթալով ընդարձակուած են այս կենսագրական գծերը. Գրիգոր Խլաթեցոյ խմբագրութիւնն ԺԵ. դարու սկիզբէն ունի «Սուրբ Հայրն մեր եւ երանելի վարդապետն Եղիշէ ճգնաւորն էր յաշակերտաց սրբոյն Մեսրոպայ, հմուտ աստուածային գրոց հին եւ նոր կտակարանաց. այլ եւ տեղեակ արտաքնոցն հանճարոյ փիլիսոփայական արհեստից. որ եւ զպրապետ եղև սրբոյն Վարդանայ սպարապետին Հայոց»։ ... (Վիեննայի Միթիթ. Մատ., Թ. 10, 330 ա, ԺԶ. դար): Այսպէս նաեւ Թ. 701, 374 ա (յամէ 1635), որ կը յաւելու թէ «էր թարգմանիչ յոյժ հմուտ հին եւ նոր Կտակարանաց աստուածային գրոց»։ Խլաթեցոյ խմբագրութիւնն գիտէ արդէն թէ նախ «ի գաւառին Մոկաց» ճգնած է եւ հոն «յետ ժամանակաց դուեալ զնա հովուաց ոմանց յայրի միում ան-

կեալ նըղեալ եւ ճնշեալ ի խոտակրօն վարուցն եւ համբաւեցին զայրն եւ գերանելին: Իսկ սուրբն Եղիշէ խոյս տուեալ անտի եւ եկեալ բնակեցաւ ի գաւառն Ռշտունեաց, որ եւ անդ վախճանեալ փոխեցաւ ի Քրիստոս: Եւ յետ բազում աւուրց եկեալ գտին անապահան զմարմին սրբոյն որպէս ի քուն եւ զարմացան: Եւ յետոյ ծանեան զնա որ սուրբն Եղիշայ էր... Եւ շինեցին յանուն նորա եկեղեցի եւ անդ փոխեցին զնա ի հանդիստ: ... Իսկ իշխանն Մոկաց եկն յետոյ եւ էստ զգլուխ սրբոյն եւ զաջն եւ տարեալ ընդ յաւաջին խուզն այրին եւ շինեաց ի վերայ նորա վայելուչ եկեղեցի» (Թ. 701)։

Նոյն վարքն աւելի ընդարձակուած ձեւով հրատարակուած է Յայսմաւուրքէ մը հանուելով Սոփերք հայկականք, ԺԱ. (Վենետիկ 1854), էջ 39—45 եւ ասկէ Հայաստան, Բ. § 155: Այս խմբագրութեան համաձայն «պատմի վասն երանելոյն Եղիշէի վարդապետի, թէ էր զինուորեալ սրբոյն Վարդանայ եւ սպասաւորէր նմա»։ Վարդանանց պատերազմէն ետքը «վարս կրօնաւորութեան յանձն առնոյր... հասանէր յանապատ... որոչէր զինքն ի միաբանակեցաց եղբարց եւ զամայութիւն ստացեալ օթեվանս բնակութեան յանապատս առնէր... եւ բնակէր յայրի ուրեմն... եւ կոչի այրն յանուն Եղիշէի Սուրբ այր Եղիշէի. որ եւ այժմ ամենեցուն յայտնի է»... Հովիւները կը յայտնեն իր թագստոցը եւ կը հռչակեն իր առանձնական կեանքը: Եղիշէ խոյս կուտայ այն տեղէն «եւ եկեալ բնակէր ի գաւառն Ռշտունեաց յայրի ուրեմն մօտ ի ծովեզրին, որ եւ նա կոչեցաւ Սուրբ Եղիշէի այր»։ «Բազում ժամանակս եղեալ յառաջնունն այրի եւ սակաւ ամս ի միւսունն. յորում վախճան իսկ հասանէր երանելոյն»։ Այրին մօտ կը կառուցուի եկեղեցի եւ սուրբին նշխարները կ'ամփոփուին հոն: Մոկաց իշխանին ցաւ կ'ըլլայ որ Սուրբին մարմինը Ռշտունեաց երկրին մէջ կը հանդի: Իժըլուելու պատրուակով կ'երթայ Սուրբին հանգստարանը եւ զաղտնի «հատեալ զգլուխն եւ զձեռնն՝ վախստեայ յաշխարհն իւր անկանէր»։ Թէպէտ այս պատճառաւ մեծ խոսովութիւն կը ծագի Ռշտունեաց եւ Մոկաց իշխաններու մէջ, բայց շուտով կը կնքուի հաշտութիւնը։

Կիրակոս Գանձակեցի եւ ուրիշներ ԺԳ.

դարէ սկսեալ կը ներկայացնեն զԵղիշէ Սահակի եւ Մեսրոպի աշակերտներու թուին մէջ (Կիր. Գանձակեցի, էջ 3, 16 եւ 17. Վարդան, էջ 51, Պատմութիւն վասն Ս. Սահակայ հայրապետին եւ Մեսրոպայ վարդապետին, Սոփերք, Բ. էջ 14. «Մովսէս Խորենացի... Մամբրէ, Դաւիթ Անյաղթ եւ Եղիշէ, Յովսէփ, Եղնակ... որք ընդ նոսա զնացին յԱղեքսանդրիա... ի Բիւզանդիոն, յԱթէնս» եւն)։

Ամփոփելով աւանդութեանս տուեալները կը տեսնենք. Եղիշէ ակնատես է Յագիկերտ Բ. ի հանած հալածանքներուն. ակնատես Վարդանանց կուրին: Գահանայ կամ վարդապետ է: Գրած է ի հրամանէ Մամիկոնեան Դաւիթ երիցու կամ ըստ Թովմայի՝ հրամանաւ Ս. Վարդանի Վարդանանց պատերազմի պատմութիւնը: Պերոզի օրով կը գտնուէր Մոկաց աշխարհը, ուր տեսակցութիւն ունեցած է Բարձումայի հետ՝ ըստ Թովմայի եւ հոն վախճանած է: Դաւիթ կրօնաւոր 1172ին կը ճանչնար զինքը «տեղեակ եւ հմուտ ամենայն պատերազմաց Վարդանանց» եւ սրբակեաց ճգնաւոր: ԺԲ. դարու ճատրնարի մը մէջ կը ներկայանայ «քահանայ, ճգնաւոր կրօնաւոր եւ միայնակեաց». ԺԳ. դարուն «սպասաւոր եւ զպրապետ» Վարդանի. ճգնաւոր Մոկաց եւ Ռշտունեաց աշխարհին մէջ: Նոյնացուած է ճառագիւր Եղիշէի հետ: ԺԳ.—ԺԵ. դարերուն դասուած է Սահակի եւ Մեսրոպի աշակերտներու թուին մէջ, եւ ուսման համար ուղեւորած Աղեքսանդրիա, Բիւզանդիոն եւն: Գեղեցիկ օրինակ մը թէ հիները ինչպէս կը յօրինէին կենսագրութիւն։

4. ԵՂԻՇԷՆ ԺԸ.—Ի. ԴԱՐՆԵՐՈՒ ԸՄԲՈՆՄԱՄԲ

Կազմուած էր արդէն Եղիշէի կենսագրութիւնը նախորդ դարերուն, աւելի ճոխ եւ բովանդակալից քան ուրիշ որ եւ է մատենադարի մը: Պէտք չզգաց նոր դարը կասկածիլ աւանդութեան տուեալներու վրայ. բայց տեսաւ կարեւոր լրացնել զանոնք նոր մանրամասնութիւններով եւ յայտնութիւններով։

Հ. Մ. Չամչեան¹ անդրադարձած է որ Եղիշէ ոչ միայն զպրապետ է Վարդանայ, այլ եւ ազգական. «Եղիշէ վարդապետ՝

¹ Պատմութիւն Հայոց, Ա. Վենետիկ 1784, էջ 13, 537—538։

աշակերտակից է Խորենացոյն, եւ ազգական եւ ատենապետ սրբոյն Վարդանայ ի Ե. դարու» (Ա. 13). Եւ «Թուի թէ սա ինքն է Եղիշա եպիսկոպոսն Ամատունեաց. որ գտաւ ի Ժողովն Արտաշատու» (Ա. 537). այս Ժողովին մէջ «ընդ նմա» գտնուած է նաեւ Դաւիթ երէց, այն, որուն խնդրանքը գրեց «գեղեցիկ ոճով եւ արուեստիւ իբրեւ ականատես դաւերունն աշխարհին Հայոց» ցամն 463 (Ա. 13): Իսկ «յետ վրդովման աշխարհին Հայոց դամայութիւն խնդրեալ... կայր խոտածարակ յանձանօթ վայրս աշխարհին Մոկաց» եւն (Ա. 537): Այսպէս նաեւ Հ. Մ. Ա. Է. Գ. Ե. Բ. Կ. Ը. «Ասի լինել զպարապետ սրբոյն Վարդանայ Հայոց սպարապետի. եւ որպէս կարծի՝ մերձաւոր իսկ նորա բաւ մարմնոյ ի տանէ Մամիկոնեանց»: «Հաւանական իսկ է թէ եւ նա ինքն սուրբն Եղիշէ է այն, զոր ի նմին Ժողովի (Արտաշատու) յիշատակէ ինքնին երանելին ընդ անուամբս Եղիշա եպիսկոպոս Ամատունեաց... Զեպիսկոպոսական աստիճան սրբոյն Եղիշէի յայտ առնեն եւ կանոնադրութիւնը նորա խրատականք, որք գտանին ի կանոնագիրս»²: Ըստ Գեր. Սուքիաս Սոմալեանի³ ծնած է Եղիշէ Ե. դարու սկիզբը, դաստիարակութիւնն առած է առ ոտս Սահակայ եւ Մեսրոպի. ապա եղած զպարապետ Վարդանի, եւ վախճանած 480ի մօտերը: Թէպէտ «ոմանք կ'ուզեն զինքը Ամատունեաց եպիսկոպոս համարել», բայց եւ այնպէս կ'ընդունի թէ ներկայ էր 449ի Արտաշատի Ժողովին:

Զամբանի եւ Աւգերեանի ենթադրութիւնները գտած են արդէն ստուգութիւն. 1823ին ի Կ. Պոլիս Եղիշէի Վարդանանց պատմութեան հրատարակիչը կը զբոյժէր ճակատին վրայ. «Արարեալ սրբոյն Եղիշայի գերահռչակ վարդապետի եւ արքեպիսկոպոսի Ամատունեաց եւ աշակերտի երանելի թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ»:

Եւ որովհետեւ Եղիշէ «ազգականն» էր Վարդանայ, զիւրին էր գուշակել նաեւ անոր ծննդավայրը. «Եղիշէ հաւանօրէն Տարօնացի էր, եւ այդ գաւառին նոյն ժամանակին պանծալի եւ գերագոյն անձին Վարդանայ Մամիկոնեանց»:

² Կահատար Վարդ. եւ վկայարանութիւնը սրբոց. Ե. (Վենետիկ 1812), էջ 310—312:
³ Նոյն մտքերը տես նաեւ Նոր բողոքիչ Հայկազեան լեզուի. Ա. (1836), Նախերգանք, էջ 11:
⁴ Quadro della storia letteraria di Armenia, Venezia 1829, էջ 31:

կոնենի՝ ծանօթ, մտերիմ, սպասաւոր եւ Դպրապետ, ինչպէս կոչեն զնա: Անտարակոյս է Վարդանայ Դպրապետ ըլլալն, այս ինքն քարտուղար... միանգամայն եւ հիմուտ զինուորութեան, քէ ոչ եւ զօրական. վասն զի կրնար եւ իբրեւ դրան երէց մի եղած ըլլալ այն մեծ սպարապետին, որոյ՝ զէնքի փոխան՝ զբնով շարժեց ձեռքը, իրեն նման՝ կրկին կրակով վառելով զհոգին (հայրենեաց եւ երկնից)»⁵:

Այս ըմբռնումով ալ կ'ողելորուի Նախապետը երգելու Աւարայրի Պլպուլին ձայնովը⁶.

Եղիշէն՝ մեղու շրթունք, սրբալի սէր,
 Որ ընդ Վարդանայ հոգևով էր կապուեր,
 Մինչ հասակակից առ Սահակ նստէր,
 Եւ զոյգ որդեպէս ի սրբոյն զըզուէր: ...

Երբ ըզբաջութեան բացած առազաստ
 Վարդան յաղթութեամբ նաւէր ի ճակատ...
 Նաւակն Եղիշայ ի Բիւզանդ յԱթէնս
 Եւ յԱղեքսանդրեայ ուղղէր հեղաթեւս,
 Բանաւոր ծաղկանց մէջ շրջէր թեթեւս,
 Ի միտք առնոյր մեղր իմաստից պէսպէս:

Երբ դարձաւ յուսմանցն ու տեսաւ զՎարդան,

Զիւր թողած կորիւնն հիմ՝ յառիւծ նրման,
 Ընծայեց ըզմեղրն ի քաջին բերան,
 Դրան երէց եղաւ տանըն Մամիկոնեան:

Անրաժ ի քաջէն շրջէր Եղիշէ,
 Ի դաշտս այլ երթայր՝ ուր զէնք հրաւիրէ,
 Ի վրանին կարգայր ըզճէր ի յերկնէ՝
 Որ ըզսիրելին յաղթող դարձնէ: ...

Բնականաբար աւանդութեան այս չափուած քննուած կենսագրական դժերը պիտի գտնէին տեղ նաեւ դասադրքերու մէջ, ծանօթացնելու համար մատաղ սերնդեան Մովսէս Խորենացիէն «ոչ պակաս հռչակուած եւ այլ աւելի կարգացուած» Եղիշէն, «իւր զեղեցիկ եւ հաճոյական Վարդանանց Պատմութեանն համար, որ թերեւս եւ ամենէն ախորժեղի՝ միանգամայն եւ վայելուչ զբուսածն է մեր նախնեաց մատենագրութեան մէջ, եւ նոյն իսկ այն համբաւեալ Ե. դարունը»⁷:

⁵ Հ. Ղ. Ալիշան, Հայագրութիւն, Ա. § 20:
⁶ Հ. Ղ. Ալիշան, Նուագը, Գ. Հայրենի (Վենետիկ 1858), էջ 272—273:
⁷ Հայագրութիւն, Ա. § 20:

Եւ Հ. Գ. Զ(արբանալեան)⁸ անխուով կը գրէր «բարձրագոյն զպրոցաց» աշակերտներու համար. «Կրտսերագոյն թարգմանչաց՝ կամ երկրորդ աշակերտաց դասն էր Եղիշէ, սրբոյն Վարդանայ ատենադպիրն, եւ ինչպէս հաւանական կ'երեւնայ, նաեւ անոր մերձաւորն ազգականութեամբ»⁹: «Յոմանց կարծուի թէ եպիսկոպոսութեան աստիճանին ալ բարձրացած է, եւ թէ յԱրտաշատ գումարուած եպիսկոպոսաց ցուցակին մէջ նշանակուած համանուն Ամատունեաց եպիսկոպոսն՝ ինքն ըլլայ, ուրիշ միաբանակից պնշտոնակցաց հետ աւելցնելով նաեւ իր ստորագրութիւնը յաշխարհին Պարսից՝ ուր կը գտնուէր նոյն ատեն» (էջ 335). ուստի գիտէ թէ Արտաշատի 449ի Ժողովին թուովը ուղարկուած է Պարսկաստան զբռնող Եղիշէ եպիսկոպոսին, որպէս զի զնէ թղթին տակ իւր ստորագրութիւնը:

Նոյն շաղկով կ'ընթանայ նաեւ Միքայէլ Փորթուզալ փաշայ Եղիշէի նուիրած իւր Բնագրութեանց մէջ¹⁰. առանց փոքր իսկ կասկած արթնցնելու իւր մտքի մէջ կը յանձնէ իւր նաւը աւանդութեան ջուրին. Եղիշէ «պատանեկութեան ատենը՝ Մեսրոպայ եւ Սահակայ պատրաստած վարժարանաց մէջ ուսեր էր հայերէնի զպրութեանց հետ՝ գլուխակալ, գաւորի եւ գալարսիկ լեզու»: Ապա կ'ուղարկուի Եղիշէ կրտսեր աշակերտաց հետ (434ին) յԱղեքսանդրիա. «զէպի հարաւ իջնալով՝ հասաւ նախ յԵղեւսիա. անտի զնայ ի Պաղեստին: Ծատ տեղեր այցելեց ու քննեց անշուշտ. բայց իւր զբուսածոցը մէջ — այն ալ նիւթոյն յարմարութեամբ — միայն երկու սպաւորութիւններ մեզ կը պատմէ. Ասորի միայնակեցաց վարքը եւ Թափոր լերին զեղեցիկ նկարագրութիւնը ուր հետիոտն ելեր էր». Պաղեստինէն կ'անցնի Աղեքսանդրիա—Հուստ—Աթէնք—Կ. Պոլիս. 442ին կը վերադառնայ հայրենիք երբ վախճանած էին Սահակ եւ Մեսրոպ: Վերադարձին կը զինուորի Վարդանին. 449ին կ'ուղեկցի Վարդանին զէպի

⁸ Հայկական հին զպրութեան պատմութիւն. Գ. սոյ., Վենետիկ 1897, էջ 334—349:
⁹ Հեղինակն աչքի առաջ ունեցած է Աւգերեանի «որպէս կարծին», որ հոս նաեւ «հաւանական» երեւցած է:
¹⁰ Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ եւ քննադատութիւնը Միքայէլ փաշայի Փորթուզալ. Վենետիկ 1903, էջ 71—78: Հմմտ. նաեւ Միքայէլ Փորթուզալ փաշայ, Եղիշէի պատմութեան շարադրութեան թուականը. Բագմամվէպ, 1898, էջ 6—10:

Տիարոն: «Եղիշէի՝ Վարդանէն անրաժան՝ ամենայն իրաց եւ պատերազմաց մէջ նորահետ գտնուած ըլլալուն բաւական ապացոյց է զբուլթեանը մէջ ցուցուցած ռազմագիտական հմտութիւնը». ուստի եղած է կամ զինուոր եւ կամ քարտուղար—վարդապետն Վարդանի: «Բարեբախտաբար Աւարայրի նահատակութեան օրը՝ Եղիշէ պատահամբ կամ գործով պատերազմին ամենէն վտանգաւոր կողմը չէր գտնուեր» (աղբիւր կը նշանակուի Ալիշանի Հայրենին): «Հաւանօրէն Մամիկոնեանց զեղեկի մէջ ի գիր առաւ վերջին եղելութեանց պատմութիւնը. այսինքն զառաջին եօթն յեղանական» (458): Այս ժամանակ Եղիշէ 44—49 տարեկանէն աւելի չէր: Այնուհետեւ կ'առանձնանայ Մոկաց լեռները. ուր կը յօրինէ Ը. յեղանակը իբր 464—470ին: Հաւանօրէն Եղիշէ «470էն ասորին չապրեցաւ»:

Աւելորդ է աւելի երկարել այս ըմբռնունքներու շարքը: Բայց չենք ուղեր անտեսել «Եղիշէի մասին հաւանականագոյն պատմութիւնը» Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեանի «տեսութեամբ»¹¹, զոր կրնանք հետեւեալ տողերու մէջ ամփոփել. Օրմանեան զժուարութիւն չի տեսներ եթէ «նոյնացնենք պատմագիրը Ծահապիվանի Ժողովին Եղիշէ երէցին հետ. եւ յետոյ իբր Ամատունեաց եպիսկոպոս ներկայ եղած ըսենք Ալաիշատի (!) Ժողովին»: «Եթէ Սահակ—Մեսրոպեան աշակերտաց կեանքին ընդհանուր ձեւը իբր ուղեցոյց առնենք, Եղիշէն ալ այն բազմաթիւ երէցներէն մէկը կ'ըլլայ, որք Սահակ—Մեսրոպեան աշակերտութիւնը կազմեցին եւ իր ընկերներուն նման եպիսկոպոսութեան ալ բարձրանալով՝ Արտաշատի Ժողովին ներկայ Ամատունեաց Եղիշէ եպիսկոպոսը եղած պիտի ըլլայ: ... Երբոր կացութիւնը կը փոխուի Աւարայրի ճակատամարտէն ետքը... պարտաւորուած է հրապարակէ քաշուիլ եւ ճգնողական կեանք մը ստանձնել... Այս պարագաները կ'արդարացնեն եւս թէ ինչո՞ւ հինէն բոլոր թարգմանիչներու մէջէն միմիայն Եղիշէն Մեսրոպի տօնակից եղած է, իբր Վարդանանց փառաբանող, իբր հաւածեալ եւ իբր ճգնաւոր, որ իւր ընկերներու մէջէն առաջին խոստովանողն եղաւ...»:

¹¹ Մ. Արքեպ. Օրմանեան, Ազգապատմութիւն, Կ. Պոլիս 1913, էջ 436—438:

«Այս է մեր տեսութեամբ Եղիշէի մասին հաւանականագոյն պատմութիւնը, իսկ մահն ալ հարկ կ'ըլլայ դնել Գիւտի առաջին տարին 461ին»:

Բարդէն Մ. Վ. Կիւլէսէրեան¹², որ մեր- ձեցաւ առաջին անգամ Եղիշէի անձին եւ ժամանակին քննադատի անաչառութեամբ, թէեւ կը մերժէ Եղիշէի՝ Ամատունեաց հա- մանուն եպիսկոպոսի կամ Շահապիւմանի ժողովականներէն համանուն զրան երէցի հետ նոյնութիւնը, մինչեւ անգամ «Եղիշէ» կեղծանուն մը կը նկատէ պատմագրին հա- մար, պատմիչն անձանօթ անձ (էջ 65) կը համարի, եւ Պատմութիւնը գրուած «Փար- պեցիէն զրեթէ անմիջապէս յետոյ 510— 520ին» (էջ 212), բայց եւ այնպէս կը մնայ յառած աւանդութեան, երբ Յայլակերպու- թիւնն Քրիստոսի ճառին հեղինակը կը խառնէ Միանձանց ճառին «ուխտաւոր ման- կանց» հետ եւ վերջիններս կը նոյնացնէ «փոքր թարգմանչաց խումբին» հետ, «որ ուսումնասիրութեան կը պարապի, եւ ինչ- պէս կը պատմէ Սորենացին, իրենց ուսում- նական ուղեւորութեան միջոցին հանդիպե- ցան Եղեսիա եւ Պարեւտին»։ Ուստի «Վար- դանանց պատմագիրը, հեղինակ միանգա- մայն Միանձանց Սրատին եւ Թափոր լեռան նկարագրութեան, կը պատկանի Փոքր թարգմանիչներու խումբին: Վարդանանց պատմագիրն իբր ուսումնական Մովսէսի եւ Գաւթի, ասոնց հետ Բիւզանդիոն էր 451ին. այս ինքն՝ Վարդանանց Պատերազմը վեր- ջանալէն շատ յետոյ վերադարձան ի Հայս, հետեւաբար՝ Պատմագիրը ականատես չէ Վարդանանց դէպքերուն» (էջ 67—68): Բայց Կիւլէսէրեան միտ չէ դրած որ 450ին իբր 20 տարեկան ուսանողն 520ին, երբ պիտի գրէր իւր ոսկի մատենիկը, խոնջած տարիքի պիտի հասնէր: Յամենայն դէպս հրապա- րակի վրայ չըջող աւանդութիւնները պատ- ճառ եղած են դրաւոր աղբիւրներու այս մեկնաբանութեան:

Եղիշէի անձին եւ գրութեան մասին տե՛ս նաեւ հետեւեալ գրութիւնները, ուր նկատի առնուած է մատենագիրը զարձեալ համաձայն աւանդութեան, կա՛մ իբրեւ պատ- մագիր եւ կա՛մ բանաստեղծ.

Ա. Մ. Ա., Եղիշէ վեմամիսոս պատմա-

¹² Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն, վրին- նա 1909 (գրուած 1896ին):

գիր Հայոց. Ա. ր ծ ու ի Վ ա ս պ ու ը ր ա կ ա ն, 1858, էջ 251—257: — Եղիշէ վարդապետ, պատմաբան մատենագիր Ե. դարու. Ա. ր ա- ր ա տ, 1868, էջ 89—92: —

P. Vetter, Եղիշէ վարդապետ Հայոց. ի գիրս՝ Nirschl, Lehrbuch der Patrologie und Patristik, Bd. III (Mainz 1885), էջ 241—262. = Հայ. թարգմ. Հ. Յ. Տաշեան՝ Հայկական աշխատասիրութիւնը հայագէտ Պ. Ֆէթթէրի- վրեննա 1895, էջ 105—115: — Félix Nève, Elisée, historien du V^e siècle. ի գիրս՝ L'Ar- ménie chrétienne et sa littérature. Louvain 1886, p. 299—316. Հմմտ. նաեւ F. Nève, Sur l'histoire de Vardan par Elisée. L'Uni- versité catholique, t. XX (Paris 1845), p. 491 եւ յլ.: — Юрий Веселовский, Ли- тературный дѣятель героической эпохи. Кавказскій Вѣстникъ, II. 1901, № 2, էջ 49—67: Հմմտ. Մ ու ը ճ, 1901, էջ 315— 316: — Э. В. Эриксонъ, Объяснение нѣко- торыхъ сообщеній армянскаго историка Эгише съ точки зрѣнія психіатріи. Кав- казскій Вѣстникъ, 1902, № 3, էջ 85—93. — Հ. Յ. Գաթրըճեան, Ե. դարու չորս հայ պատմագրութեանց ժամանակները. — Բ. Եղիշէ: Հ ա ն դ է ս Ա մ ս ո ը ր ե ա յ, 1887, էջ 10—11: — Գ. Գապայէնճեան, Հայ ողբեր- գուներ. Եղիշէ: Տ ա ճ ա ը, 1912, էջ 49—52, 69—72: — Յ. Օշական, Եղիշէ. Չ ու ը ր թ- ն ո ց, 1929, էջ 15—18, 67—69: — Գ. Մխա- լեան, Եղիշէ վարդապետ եւ Վարդանանց պատմութիւնը. Կ ո չ ն ա կ Հ ա յ ա ս տ ա ն ի, 1929, էջ 904—907: — Հմմտ. նաեւ՝ Հորոյ, Եղիշէ եւ իւր քսաներորդ դարու հայ ու- սումնասիրողը: Կ. Պոլիս 1928, էջ 3—40: — Առ այս՝ Հ. Ե. Փէլիկեան, Հորոյի Եղիշէն: Բ ա զ մ ա վ է ս յ, 1923, էջ 374—377. 1924, էջ 22—26, 52—57:

Ուրիշ առթիւ պիտի յիշենք Պատմու- թեան հրատարակութիւններն եւ թարգմա- նութիւնները, որոնց յառաջաբաններու մէջ խօսք եղած է նաեւ Եղիշէի անձին մասին:

5. Եղիշէի ֆենսիւստիօնի և Ս. Ս. Ա.

Այս է աւանդութիւնն եւ անոր մեկնա- բանուած ընդլայնումը: Կը շոյէ այն միամիտ ազգասիրութիւնը, կը խթանէ երեւակայու- թիւնը բանաստեղծելու, բայց սնունդ չի տար բանասիրութեան: Լուրջ քննադատու- թիւնը չի կրնար գլուխ խոնարհեցնել աւան-

դավէպիս առաջ. եւ կը տեսնէ հոն վտանգը, որ կը սպառնայ պատմագրութեան:

Նկատուած էր արդէն շատերէն, որոնք ձեռնարկած էին գրել Ե. դարու պատմու- թիւնը, թէ Եղիշէի եւ Ղ. Փարպեցւոյ տեղե- կութիւնները շատ տեղ անմխարան են, նոյն իսկ հակասական: Բայց «ակնաստես» Եղի- շէի եւ ականջալուր Ղազարի ճոխութիւնը թոյլ չէր տուած մէկուսն առաւել եւ միւսինը նուազ դնահատել. մանաւանդ թէ ականջա- լուրէ աւելի ակնաստեսի վկայութիւնը կշռուած էր ծանր. եւ այս համոզմամբ յօ- ըրնուած էր Վարդանանց պատերազմի պատ- մութիւնը՝ ճարտար շարահիւսմամբ երկու աղբիւրներու¹: Բայց տակաւ տակաւ սկսաւ արթննալ տարակոյս Եղիշէի արժանահաւա- սութեան մասին: Ա. Մ. Գարագաշեան² կ'արտայայտուէր այս նկատմամբ զգոյշ խօս- քերով. «Պատմութիւնն Եղիշէի թէպէտ ժա- մանակակից՝ ունի պատմական հիման վրայ վիպասանական ձեւ, որ պատմութիւնը գէթ ըստ պարագայից կը փոխէ ի վէպ»։ ուստի «է պատմական վէպ, որոյ նպատակն է բարձրացունել յաշս ժողովրդեան, ժամա- նակին բառով ուխտապահութիւնը, եւ ա- զարտել ուխտադանցութիւնը, զմին՝ յան- ձին Վարդանայ, եւ զմիւսն՝ յանձին Վասա- կայ, որ են երկու անձինք այն վիպասա- նութեան: Ուստի եւ զգուշաւոր պատմիչ մը չկրնար առանց անաչառ դատաստանի առնուլ բան առ բան ինչ որ կը պատմէ Եղիշէ»:

Ուրիշ բանասէր մը՝ Գր. Տէր-Պողո- սեան³ կը գրէր աւելի բացայայտ. «Կարդա-

¹ Հ. Յ. Գաթրըճեան, Տիեզերական պատմու- թիւն. Բ. վրիննա 1852, էջ 526—550: — Fr. Spiegel, Eränische Altertumskunde. Bd. III. Leipzig 1878, էջ 357—369: — Ա. Մ. Գարագաշեան, Գննական պատմութիւն Հայոց. Տիգրիս 1895, էջ 111—218. հմմտ. եւ Գ. 362—367: — Հ. Ղ. Ալիշան, Կարմիրն Վարդան. Յուշիկը հայրենեաց Հայոց. Ա. Վենետիկ 1869, էջ 239—269: — Կ. Կոստանեանց, Հիւսուած բանից նախնի պատմադրաց Հայոց: Պատմութիւն ժամանակաց մարդանութեան ի Հայս. Մասն Ա. Գիրք Ա—Գ. Վրիննա 1877: Բ. գիրքն նաեւ առանձին Բ. տարգրութեամբ՝ Տիգրիս 1894: — Բարդէն Մ. Վ. Կիւլէսէրեան, Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն. վրիննա 1909, էջ 225—434: — Բ. եպ. Կիւլէսէրեան, Հայաստանեայց եկեղեցին Ե. դարու մէջ: «Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն» գրքէն յապաւուած վրիններ, նոր յաւելումներով: Կ. Պոլիս 1912, 8⁰, էջը ԺԵ + 97: — Օ(բմանեան Մ.), Ժամանակագրու- թիւն զորոնց Վարդանանց. Ժամանակագրութիւն ըստ Եղիշէ պատմագրի եւ Ղազարայ Փարպեցւոյ: Լ ու մ ա յ, 1900, էջ 337—347: — Բարգիւնի եպ., Գալն Վարդան. Պոստոն, 1920: Եւ այլն: ² Գննական պատմութիւն Հայոց. Գ. թիֆլիս 1895: ³ Հանդ. Ամս., 1895, էջ 21. հմմտ. եւ 112—113:

լով Եղիշէի պատմութիւնը եւ համեմատե- լով Ղազարի Բ. Դրուագի հետ, մարդ ստի- պուում է շարագրել մի նոր գիրք նշանակե- լով այն բազմաթիւ տարբերութիւնները, որ այդ երկու պատմիչի մէջ ենք գտնում: Նշա- նակելով այդ տարբերութիւնները, առաջին հայեացքով անգամ աչքի են ընկնում նրանցից յառաջացող ծանրակշիւ հարցեր. 451 թուի պատերազմի պատճառները, Պարսից նպա- տակը, երկու կուսակցութեան ոյժը, գոր- ծունէութեան եղանակը եւ հետեւանքը — այս բոլոր ծայրայեղութեան հասցրած տար- բերութիւնով են երկու պատմիչի մէջ. ուրիշ խօսքով՝ թէ հարցասիրական կողմերը եւ թէ պատմական դէպքերի նկարագրութիւնը երկու պատմիչի մէջ տարբեր ուղղութիւն եւ բնասիրութիւն ունին»։ «մանաւանդ թէ ուղ- դակի հակասում են իրար»:

Տէր-Պողոսեան երկար համեմատութիւն- ներով շօշափեց այս հարցը⁴. թէպէտ ու- ըրիներ չուղեցին այս տարբերութիւններէն հանել ծանրակշիւ հետեւութիւն⁵: Հ. Ղ. Ալիշան կը գրէր. «Եթէ իր գրածին եւ իր համընթաց հետեւող Ղազարու Փարպեցւոյ (կամ ո՛ր եւ է ուրիշի) պատմածին մէջ գտնուի աւելի կամ պակաս ինչ յանուանս եւ ի դէպս, գրեթէ ոչինչ կրնայ ըսուիլ եւ ոչ արժանի տարակուսելու: Ղազար՝ թերեւս աւելի պատմաբան է ըստ սոսկ պահանջանաց պատմութեան, այլ Եղիշէ թուի իմն թէ պատմական յատակը ոտքով չկոխելով՝ քայլէ կամ երթայ թռչի՝ առանց իսկ զօդս կոծելոյ՝ ըստ իր ըսածին»:

Բայց Գր. Սալաթեան բացատրելու հա- մար այս հակասութիւնները երկու աղբիւր- ներու մէջ դիմեց ենթադրութեան, ընդու- նելով Եղիշէի «նախնական բնագիր մը»,

⁴ Գր. Տէր-Պողոսեան, Եղիշէի Պատմութեան աղբիւրը: Հ ա ն դ. Ա մ ս., 1895, էջ 20—23, 58—61, 110—113: — Նկատողութիւններ Եղիշէի Պատմու- թեան վերաբերեալ: Հ ա ն դ. Ա մ ս., 1896, էջ 129— 133, 168—170, 197—200, 302—305. 1902, էջ 202— 205, 317—321: — Հմմտ. եւ Եղիշէի Պատմութեան քննադատութեան առթիւ (տա չ. Վ. Հացունի): Հ ա ն դ. Ա մ ս., 1897, էջ 230—235: ⁵ Տէր-Պողոսեանի դէմ կ'արտայայտուի Հ. Վ. Հացունի, Խորհրդածութիւնք Եղիշէի վերայ նոր քննադատութեան մի առթիւ: Բ ա զ մ ա վ է ս յ, 1896, թ. 10—12. 1897, թ. 1—4, 9: — Հ. Վ. Հացունի, Անգամ մի եւս առ Տէր-Պողոսեան Եղիշէի մասին: Բ ա զ մ ա վ է ս յ, 1897, էջ 509—515: — Առանձին հրատարակութեամբ՝ Հ. Վ. Հացունի, Խորհրդա- ծութիւնք Եղիշէի պատմութեան վրայ: Վենետիկ 1896, 8⁰, էջը 230:

«որից օգտուել է Փարպեցիին եւ որը Սերէոսին (է. դար) էլ ծանօթ էր. յետոյ նա ենթադրուել է փոփոխութիւններէ ու նորից մշակուել՝ ըստ երեւութիւն, ոչ վաղ քան է. դարը»⁶: Եւ «ներկայ Եղիշէի Պատմութեան մէջ արդարեւ նկատուում են է. դարու գրուածքի հետքեր» (էջ 115):

Նոյն եզրակացութեան յանդեցաւ նաեւ Ն. Ազոնց, երբ համեմատութեան առաւ երկու պատմագիրներու տուեալները նկատմամբ Վասակի⁷. «Վերոյիշեալ համեմատութիւններն եւ ուրիշ պարագաներ կը բերեն զմեզ այն մտքի, թէ Եղիշէի եւ Ղազարի մէջ կայ մատենագրական աղբւր: Անուններու միանման ցանկերը նոյն կարգով երեւան կու գան երկուքի քով ալ: Այսպիսի տարօրինակ զուգարկութիւններ աւելի մէկուն մէկալէն կախումը քան թէ երկուքին համար հասարակաց աղբւր ենթադրել կու տան: Այն կարծիքն թէ Ղազար օգտուած ըլլայ Եղիշէէն, այնու որ անիկա ըստ աւանդութեան սակէ ետքը ապրած է, չի կրնար հաստատուել: Մատենագրական տեսակէտով Ղազարի գործը աւելի կանուխ գրուած է քան Եղիշէինը: Մեր ձեռքը գտնուած խմբագրութեամբ չի կրնար Եղիշէի Պատմութիւնը 2. դարէն յառաջ գրուած ըլլալ» (էջ 0129): Բայց կը շեշտէ նաեւ թէ Եղիշէի քով կան շատ էջեր, որոնք ինքնակայ նկարագիր ունին, չեն կրնար հետեւաբար Ղազարի գրութիւնը աղբւր ունեցած ըլլալ (էջ 0130): Այս կէտերը կ'ենթադրէ Ազոնց երրորդ աղբւրէ մը քաղուած ըլլալ (հմմտ. վերը, էջ 32):

Ղազար եւ Եղիշէի աղբւրը աւելի մանր զննութեան առաւ Բ. Վ. Կիւլէսէրեան, եւ ապացուցուց համոզիչ փաստերով թէ Եղիշէն ունեցած է աչքի առջեւ Ղ. Փարպեցու Բ. Դրուագը եւ օգտուած անկէ տեղ տեղ նաեւ բառացի քաղուածներով: Իր ըննութեանց արդիւնքը կ'ամփոփէ Կիւլէսէրեան այսպէս. «Վարդանանց Պատմութիւնը Փարպեցու Պատմութեան վրայէն շինուած՝ յատկապէս հանապազ ընթերցումի համար գիցազներգութիւն մ'է պատմական: Գրութեան ժա-

⁶ Գր. Խալաթեան, Եղիշէի աղբւրների առթիւ. Հանդ. Ա. մ. ս. 1895, էջ 113—116 (նոյն արտատպ. Վրենս 1895, 8⁰, էջ 8):
⁷ Н. Адонцъ, Марабанъ Васакъ передъ судомъ историковъ. Записки Восточн. отдѣл. Импер. русск. археолог. общ. XV (С. Петербургъ, 1904), 0122—0130.

մանակամիջոցն է Փարպեցիէն գրեթէ անմիջապէս յետոյ 510—520» (էջ 175—199):

Կիւլէսէրեան եւ Ս. Յ. երեւան բերին Եղիշէի Պատմութեան մէջ ուրիշ գրաւոր աղբւրներ ալ, որոնց թէեւ իրենցմէ յառաջ եղած էին ուշադրութիւն դարձնողներ, բայց չէին առնուած անոնք բաղդատական ըննութեան: Կը յիշեմ՝

1. Մարութա, Նիրկերտի եպիսկոպոսի վկայս Արեւելից գրութիւնը, որուն թարգմանիչը կը համարուի Աբրահամ Խոստովանող⁸:
2. Փիլոն Երրայեցուց գրութիւնը հայերէն թարգմանութեամբ⁹:
3. Աստուածաշունչ մատենաք, յատկապէս Մակարայեցուց գրքերն¹⁰ եւ Մարգարէականք¹¹:
4. Եղնիկ, ընդդէմ Աղանդոյ¹²:
5. Յ. Ոսկերեան¹³:

Եղիշէի կախումը Ղազար Փարպեցուց Պատմութեան վերջնականապէս հաստատուելէ ետքը կը ծագէր ինքնաբերաբար Եղիշէի ժամանակի խնդիրը:

Արդէն 1895ին Հ. Յ. Տաշեան հասած էր այն եզրակացութեան, թէ «Եղիշէ ամէնէն կանուխ Ե. դարուն ճիշդ վերջն կամ 2. դարուն սկիզբը գրած կրնայ ըլլալ»¹⁴:

Նոյն հետեւութեան յանդեցաւ յետոյ, ինչպէս տեսանք, Բարդէն Կիւլէսէրեան եւ Ն. Ազոնց: Վերջինս քայլ մ'աւելի առաւ եւ Վասակ Մամիկոնեանի յիշատակութեան վրայ յեցած Եղիշէի ժամանակը ենթադրեց 536էն յետոյ: Իսկ Վասակ Մամիկոնեանի «Ստորին Հայոց սպարապետ» յորջորջումը նկատի առնելով Հ. Յ. Տաշեան Եղիշէի ժամանակը

⁸ Կիւլէսէրեան, Եղիշէ, էջ 137—151:
⁹ Անդ, էջ 151—174: Սահակ եպ. Խաչատուրեան, Փիլոն Երրայեցի եւ Եղիշէ: Բ. Ի. Բ. Կ. 1899, էջ 788—791:
¹⁰ Յ. Ս., Եղիշէ եւ Մակարայեցուց գրքերի յարաբերութեան խնդիրը: Ա. ր. ար. ատ., 1896, էջ 553—555:
¹¹ Յ. Ս., Մարգարէից գրքերի հետքերը Եղիշէի Պատմութեան մէջ: Ա. ր. ար. ատ., 1897, էջ 211—212:
¹² Au. Carrière, La naissance d'Ormizd et d'Ahriman d'après Théodore Bar Khouni, Elisée-Paris [1900], 4⁰, pp. 4, վերջապէս: — Հ. Յ. Տաշեան՝ Եղիշէի մէկ նոր աղբւրը ըստ Ա. Կարէրի. Հանդ. Ա. մ. ս., 1900, էջ 183—186: — A. Meillet, Notice sur une passage de l'histoire arménienne Elisée. Journal Asiatique, Sér. IX, t. 19 (1901), p. 548 եւ շար.: — Ա. Մէյէ, Միհր-Ներսէսի նամակն առ Հայոս. Բանաստեղծ, 1902, էջ 141—142:
¹³ Թովմաս Լեւոնեան, Եղիշէ եւ Ոսկերեան: Բ. ար. մ. վ. է. պ., 1917, էջ 107—108:
¹⁴ Հանդ. Ա. մ. ս., 1895, էջ 20, ծանօթութիւն խմբագրութեան:

ՍԵՊՏԱՆՔԱԿԱՆՔ

ՀԱԹԵՐ ԵՒ ՈՒՐԱՐՏԵԱՆՔ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՍԻՐՈՒԹԻՒՆ

Ա.

նշանակեց կանխագոյն 536 եւ կամ 591: Այս հատուածը յետոյ մենք առանձին զննութեան նիւթ պիտի ընենք, եւ այս առթիւ պիտի ծանօթանանք Ազոնցի եւ Տաշեանի պատճառարանութիւններուն: Ծանօթացանք վերագոյն նաեւ Գր. Խալաթեանցի տեսութեան, որ Եղիշէի պիտեան խմբագրութիւնը մինչեւ է. դար կ'իջեցնէր: Յիշենք հոս ամբողջութեան համար նաեւ Ստեփան Կանայեանցի մտածմունքը¹⁵, որ նկատի առնելով Եղիշէի այն տեղին, ուր կ'ըսուի թէ Յազկերտ Բ. ի բանակն «յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց, եհար մինչ ի քաղաքն Մծրին» կ'ենթադրէ թէ Եղիշէի Մծրինը յունական բաժնի մէջ զննելը ծագած է Սերէոսի մէկ նախադասութեան թիւրիմացութենէն եւ կամ 591ի սահմաններու որոշման մասին իրեն հասած անձիշդ տեղեկութենէն. «այսպիսով ուրեմն, եթէ Եղիշէն Սերէոսից յետոյ չէ, յամենայն դէպս 591ից յետոյ է. եւ ուրեմն չէր կարող Վարդանանց պատերազմի ժամանակակից լինել»: Բայց Կանայեանցի իմացումը հոս ճիշդ չէ. ինչպէս պիտի տեսնուի յետոյ, Եղիշէի խօսքը Խոսրով Ա. Անուշըրուանի մասին է, որ հասաւ «մինչեւ Մծրին», այսինքն մինչեւ Մծրնի դիմաց գտնուող Դարա բերդաքաղաքը:

1913ին, երբ կը գրէի Դունոյ 572ի ապստամբութեան պատմութիւնը, նկատուելով անոր եւ Եղիշէի Վարդանանց պատմութեան մէջ տեսնուած մեծ նմանութիւնը, կը հարցնէի. «Արդեօք այս պատերազմը (572ի) որ եւ իցէ ազդեցութիւն չէ՞ ըրած Եղիշէի վրայ» (Հանդ. Ա. մ. ս. 1913, էջ 76):

Եղիշէի անձին եւ ժամանակին եւ գրութիւններուն շուրջը յարուցուած այս կասկածները շինած էին արդէն տեղ գրագէտներու մտքին մէջ եւ կը յաճէր հրատարակել վրայ ընդհանուր փախաղը՝ տեսնել լուծուած Եղիշէի գաղտնիքն ալ: Արշակ Չօպանեան, Ա. ն. ար. Բ. (1930), Թ. 2, էջ 104 կը գրէր. «Եղիշէն, որ ապահովապէս Վարդանի ժամանակակից չէր — ինչպէս «Ազաթանդեղոս»ը խմբագրող հեղինակը ժամանակակից չէր Տրդատի — ո՞ր դարուն գրած է իր պատմական քերթուածը. եւ ո՞վ է»:

Փորձենք միջամուխ ըլլալ այդ գաղտնիքի խորքը: (Շարունակելիք.)

¹⁵ Ա. ր. ար. ատ., 1913, էջ 505—508:

Մօտ տասն տարի յառաջ հրատարակուեցաւ ստուար հատոր մ'իբր առաջին մասն երկասիրութեան մը, որ նպատակ ունէր հայ ազգին եւ մանաւանդ իւր լեզուին հին աղբրներուն մասին բաղմաթիւ գիտնոց պէսպէս դրութիւններն եւ զանազան եւ երբեմն զարմանազան կարծիքները ներկայացնել, միանգամայն իւրաքանչիւր Հատածի թէ՛ ընթացքին մէջ եւ թէ՛ մանաւանդ վերջը կցել բառական ճոխ մատենագիտական բաժնի մը, որ դիւրութիւն ընծայէ այն խնդիրներով կրկին զբաղելու ուղղութեամբ: Գիրքը թէեւ հրատարակուած 1920ին, գրուած եւ սպառուած էր 1900—1908 տարիներուն ընթացքին: Անոր համար՝ ինչպէս Հրատարակիչն ուղիղ դիտած էր (հմմտ. «Առ Ընթերցող»), «Թէ՛ այս ժամանակամիջոցին եւ թէ՛ մանաւանդ անկէ ետքն այլեւայլ խնդիրներ, որոնց մասին խօսուած է, նորագոյն հետազոտութեանց՝ յատկապէս պեղմանց՝ հետեւութեամբ նոր երեւոյթներ առած են: Այսպիսիք այլեւս կարելի չէր նկատի առնուի: Նոյնպէս պէտք է նորագոյն կարեւոր օտար եւ ազգային հրատարակութիւններ հնարաւոր չէր գետեղել իւրաքանչիւր պատճառ տեղը»: Այս զգալի պակասը լրացնելու համար՝ Ա. Դարմութեան «Վերջին Պրակին մէջ պիտի գետեղուին Մնացորդք, այսինքն՝ Յաւելուամներ, ուր պիտի տրուին այլեւայլ կէտերու մասին նաեւ Ուղղելիքները»: Դժբախտաբար կամք անկախ պատճառներով կարելի չեղաւ մինչեւ այսօր յաջորդ Պրակներն աւարտել եւ հրատարակել: Բայց ասոր համար պէտք եղած ատաղձներն՝ ինչպէս յառաջ, նոյնպէս յետոյ ամբողջացնելու կամ նորագոյնները հաւաքելու փոյթ տարուած է, որչափ յիշեալ ակամայ պարագայք կը ներէին ու կը ներեն: Արդ այս ատաղձներէն մէկ մասն է զոր յաջորդել կը ներկայացնենք, յուսալով թէ օգտակար ըլլայ բանասիրաց որոնք այսպիսի խնդիրներով կը զբաղին կամ նաեւ պարզապէս կը հետաքրքրուին:

1. — Այս տեղ նկատի կ'առնուիք նիւթ մը, որ յիշեալ երկասիրութեան մէջ բաւական ընդարձակ տեղ կը բռնէ, այն է՝ «Հատք եւ Հայք», այլեւայլ ստորաբաժանումներով¹:

¹ «Ուսումն Գասական Հայերէն լեզուի (Հայկականութիւն). զոր յօրինեաց Հ. Քերտովիկ վ. Սպինեան»: Ա. Դարմութեան. Անդիւր ժամանակը. գրեաց Հ. Յալովրոս վ. Տաշեան: Վրենս 1920, էջ 724:
² Անդ, էջ 48—123: